

կու գըրիւ հաց», ինչպէս հաւաստում է Անիի Սբ. Առաքելոց եպիսկոպոսանիստ եկեղեցու բնագիրը, եւ ընդհանրացնել այն, համոզիչ եւ ընդունելի չէ, որովհետեւ թէ՛ Ամբերդի յիշատակագիրը եւ թէ՛ Տաթևի հարկացուցակը տեղեկացնում են բազմատեսակ պարտոյթների մասին:

ՌՈՒԲԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Մարդկային միտքը ինչ վերընթաց ալ ունենայ, մէկ է Աւետարաններու մէջ արտացոլուած վեհութենէն եւ քրիստոնէութեան բարոյական մշակոյթէն վեր չի կրնար բարձրանալ: Բոլոր չորս Աւետարաններն ալ, ըստ իս, անվերապահօրէն արժանահաւատ են, քանի որ ատոնց մէջ երեւան կու գայ Քրիստոսի անձի մեծութեան ցոլքը եւ այնպիսի կերպարանքով, որով միայն Աստուածութիւնը կրնար արտայայտել Անոր երկրի վըրայ: Եթէ ինծի հարցնեն, թէ քո անհատականութիւնը համաձայն է արդեօք Անոր մատուցելու ականածանք եւ երկրպագութիւն, ես կը պատասխանեմ՝ անպայման: Ես կը խոնարհիմ Անոր առաջ՝ որպէս բարոյականութեան բարձր սկզբունքի յայտնութեան:

ԵՈՏԱՆ ՌՈՒԼՖԿԱՆԿ ԿԷՕԹԷ

Ոչ ոք երբեք չի կրնար դաստիարակել մարդը: Մեղաւոր եւ անուղղելի մարդուն կեանքը կարող է փոխել միայն Աստուած՝ պարգեւելով նոր ծնունդ, վերստին ծնունդ: Վերածնունդ մարդուն կը դաստիարակէ ինքը՝ Սուրբ Հոգին: Այդ է մեծագոյն եւ միակ դպրոցը, ուր կայ մէկ ուսուցիչ եւ մէկ աշակերտ:

ՃՈՆ ԼՈՔ

Ամուր կապերով կապուեցէք Աստուածաշունչի հետ, քանի որ ան ձեր ազատութիւններու գլխաւոր խարիսխն է: Մեր ճշմարիտ քաղաքակրթութեան գործընթացի համար մենք պարտական ենք այդ գրքին: Մենք պէտք է Սուրբ Գիրքը համարենք որպէս մեր ղեկավարը այսօր եւ ապագային:

ՌԻԼԻՍ ԳՐԱՆՏ

Ես կը խղճամ անոնց, որոնց համար Աստուածաշունչը ամենօրեայ ընթերցանութեան գիրք չէ: Չեմ կրնար հասկնալ, թէ ինչու այդ մարդիկ իրենք զիրենց կը զրկեն գորութենէ եւ ուրախութենէ:

ՎՈՒԴՐՈ ՌԻԼՍՈՆ